

**2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

Աշտարակ համայնքի 2025 թվականի բյուջեի տարեկան վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 5 283 751.1 հազար դրամ, որը տարեկան ծրագրի նկատմամբ (5 056 508.94 հազար դրամ) կատարվել է 104.5 %-ով (տե՛ս հատված 1): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 14.7 %-ով կամ 677 639.4 հազար դրամով:

***Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.***

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի փաստացի եկամուտը կազմել է 448 835.8 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 8.4 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 104.2 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 27.4 %-ով կամ 96 443.0 հազար դրամով: Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 670 642.4 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 12.7 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 102.0 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 1 673.7 հազար դրամով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 204 443.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 3.9 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 229.2 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 98 736.1 հազար դրամով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 27 601.3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.5 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 92.0 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ թերակատարվել է 1 477.9 հազար դրամով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 3 409 345.5 հազար դրամը հատկացվել է: Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացման՝ սուբվենցիայի մասով հատկացվել է 1 407 134.9 հազար դրամ: Մասնակցային բյուջետավորման համար հատկացվել է 72 751.2 հազար դրամ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունից (GIZ) ստացվել է ֆինանսավորում 24 490.0 հազար դրամ, իսկ ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակից (UNDP) ստացվել է ֆինանսավորում 4 011.9 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 518 193.5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 9.8 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 125.7 %-ով:

Այլ եկամուտների մեջ ներառված՝

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 63 359.5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 1.2%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 87 %-ով,

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 3998.0 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.08%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 100 %-ով:

Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 374 779.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 7.1 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 113.4 %-ով:

Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 1 882.0 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 94.1 %-ով, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.04 %-ը:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 74 174.3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 1.4 %-ը:

Վարչական բյուրջեի պահուստային ֆոնդը՝ որը կազմում է 1 250 000.0 հազար դրամ՝ որից 800 000.0 հազար դրամը ուղղվել է ֆոնդային բյուջե:

### ***Ծախսերի գծով կապարողականը ունի հետևյալ տեսքը.***

Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ծախսը կազմել է 4466 431.8 հազար դրամ, պլանի նկատմամբ այն կատարվել է 74.2 % -ով (տես հատված 2):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 868 153.6 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 19.4 %-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով հատվածին հատկացվել է 1390 668.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 23.1 %-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը բյուջեում արտացոլվում են տնտեսական հարաբերություններ մասում, բացասական նշանով և հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 521 256.6 հազար դրամ, տարեկան պլանի դիմաց կատարվելով 13.0 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 527 273.5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 11.8 %-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 119 349.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 18.6 %-ը:

Առողջապահության ոլորտին հատկացվել է 5 791.0 հազար դրամ:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 564 351.1 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 9.3 %-ը:

Կրթության ոլորտին է հատկացվել 1 419 583.1 հազար դրամ, որը կազմում է փաստացի ծախսերի 23.6 %-ը, որից՝ նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 1 241 875.6 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 20.6 %-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 174 002.6 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 2.89 %-ը:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 38 644.9 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ծախսերի (վարչական բյուջե) ֆինանսավորմանը հատկացվել է 446 6431.7 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 74.2 %-ը:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 606 220.8 հազար դրամ կամ վարչական ծախսերի 13.57 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը հատկացվել է 306 937.5 հազար դրամ կամ վարչական ծախսերի 5.1 %-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 28.8 %-ը կամ 1 288 557.1 հազար դրամ, իսկ սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին հատկացվել է 3 211.0 հազար դրամ կամ վարչական բյուջեի 0.07%-ը:

Դրամաշնորհ է հատկացվել համայնքային հիմնարկներին 1 394 464.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ծախսերի 31.2 %-ը, սոցիալական օգնության է հատկացվել 35 650.9 հազար դրամ կամ վարչական ծախսերի 0.79 %-ը:

Այլ ծախսերին հատկացվել է 815 500.7 հազար դրամ, որի մեջ արտացոլվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումը, որը կազմում է 800 000.0 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 56.1 %-ը կամ 2 869 637.1 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, այդ միջոցներից 25 841.0 հազար դրամը կամ 0.9 %-ը տրամադրվել է մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, 11 600.0 հազար դրամը հատկացվել է

անշարժ գույք ձեռք բերելու համար, 38 511.8 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 1.34 %-ը հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների կատարմանը, 2 749 163.8 հազար դրամը կամ 95.8 %-ը շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգմանը, 2 350.5 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 0.08 %-ը՝ շենքերի և շինությունների կառուցման աշխատանքներին (տե՛ս հատված 3):

Աշտարակ համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 39 992.4 հազար դրամ (տե՛ս հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 244 751.9 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 777 326.9 հազար դրամ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**